Տեղեկատվություն ՀՀ Արագածոտնի մարզի «Կարմրաշենի Ա. Ասլանյանի անվան միջնակարգ դպրոցի» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի մրցույթ հայտարարելու մասին

ՀՀ Արագածոտնի մարզի «Ա. Ասլանյանի անվան միջնակարգ դպրոցի » ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ հաստատության տնօրենի թափուր պաշտոնի համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու համար պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը,

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով:

2) ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը,

3) հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը,

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են Կարմրաշենի Ա. Ասլանյանի անվան միջնակարգ դպրոցում 2022 թ. սեպտեմբերի 20–ից մինչև հոկտեմբերի 11-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00 -ից 15:00-ն, բացի հանգստյան (շաբաթ,կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թ. հոկտեմբերի 25 –ին ժամը 15: 00-ին, ՀՀ Արագածոտնի մարզի Կարմրաշենի Ա. Ասլանյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ.Կարմրաշեն փ.1, շ.13:

Տեղեկությունների համար դիմել կառավարման խորհուրդ՝ հեռ.՝ 094 34 32 69, 098 94 51 77, էլ. հասցե՝ naira. hakobyan.75@bk.ru :